

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայաստանի և հայ ժողովրդի միջնադարյան պատմության ուսումնասիրման համար հին հունական, քուզանդական, ասորական, պարսկական, լատինական, վրացական, թուրքական և այլ պատմական աղբյուրներին առընթեր կարևոր նշանակություն ունեն արաբ մատենագիրների (պատմիչներ և աշխարհագրագետներ) երկերը, որոնք հորինվել են հիմնականում Թ-Ժ դարերում:

Սույն հատորում քաղվածաբար տեղեկություններ ենք թարգմանել Թ դարի թե՛ աշխարհագրական, թե՛ պատմական երկերից: Դրանց հեղինակներն են աշխարհագրագետներից՝ Խորեզմի (780-847), Ֆարդանի (Թ դար), Ջահիզ (775-869), Իբն Խորդադեբի (820-912), Յակուբի (մահ. 897), Իբն ալ-Ֆակիհի (մահ. 903-ից հետո), Իբն Ռուստա (մահ. 913-ից հետո) և Կուդամա իբն Ջաաֆար (մահ. 932-ից հետո). պատմիչներից՝ Աբու Յուսուֆ (մեռ. 798), Իբն Դիշամ (մահ. 828/833), Վակիդի (մահ. 822), Խալիֆա իբն Խայյաթ (մահ. 854/855), Իբն Կուտայբա (մահ. 889), Դիմավարի (մահ. 895) և Բալազուրի (մահ. 892). ապա Յակուբին, որն ունի թե՛ աշխարհագրական, թե՛ պատմական երկ:

Իններորդ դար հասկացությունը տվյալ դեպքում հարաբերական է: Իբն Խորդադեբի, Իբն ալ-Ֆակիհի, Իբն Ռուստան և Կուդաման մահացել են տասներորդ դարի առաջին տասնամյակներում, սակայն աշխարհագրական գրականության մեջ համարվում են իններորդ դարի աշխարհագրական դպրոցի ներկայացուցիչներ: Աբու Յուսուֆին նույնպես կարելի է համարել իններորդ դարի պատմիչների շարքում, քանզի նրա իրավագիտական տեղեկությունները խիստ կարևոր նշանակություն ունեն Թ դարի պատմության համար և առնչվում են այս դարի իրադրությանը:

Սույն դարի արաբ մատենագիրների երկերում շարադրված է համաշխարհային պատմության այն ժամանակաշրջանը (է-Թ դարեր), երբ աշխարհի հզոր տերություններից էր Արաբական խալիֆայությունը, իսկ Հայաստանը սերտ քաղաքական ու տնտեսական առնչության մեջ էր այդ պետության հետ:

